

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան Թրք 10
վեցամսեայ » 5
ԿԱՆԽԻՆ

20
ՍԵՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասանման
Տարեկան Թրք 12
վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻՆ

20
ՍԵՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵԾՏԱԿԱՆ

Կը հրատարակուի ճարտար օրերը : Ծա-
նոցման տողը 10 Վանդիս : Երու թ/ւ ա-
ռաջ հրատարակուած քերքը 40 Վանդիս :
2 հրատարակուած գործիքը եւ յարմիր :

Հայտ
DIRAN PAPAZIAN
BUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNNA

ԱԶԳԱՅԻՆ

Արքայազն, Կ. Պոլսոյ Ազգային Հիւան-
գանոցի պատասխարեւոյն, իբր սնունդ օրը
4 տկան ձիթապուղ տուող հոգեբարձու-
թիւնը հրաժարեցուցուած է և նախորդ հո-
գաբարձութեան անգամը Տեառք Միքայէլ
Յակոբեան, Գրիգոր Ալեմուշկերտան, Արիկ
Ունձեան և Պատրիկ Ալեւուշկերտան հրաւիր-
ուած են հոգաբարձութիւն մը կազմելու :

Յուսալի է որ այս Ազգային և խղճա-
հար անձինք պիտի ընդունին իրենց եղած
առաջարկը, ի միութեամբ պատասխարելոյ
և յուրախութիւն ընդհ. ազգայնոց, ու ան-
շուշտ ներքին պաշտօնէութիւն կողմէն որ-
ջացեալ մարմինը անմիջապէս պիտի վստահեն,
որ տարիներէ ի վեր այդ հարկին ուտիճը
եղած է :

Տվողիս Աերա թաղին մէջ, Տէր Աստ-
տուրովի նախկին լուցկիի քործարանին մէջ
հայ գաղթականներու համար ձրի ճաշարան
մը բացուեր է և երկու շաբաթ առաջ :

ԼՍՏԵՆԻՆԸ ԶԻՐԻՆ՝ ՎԵՐԻՆԸ ՊԵՏԵՆ

Մեր Բուհնոցի պատահական թղթա-
կիցներէ մին կիսմացնէ մեզ թէ, Գեորգ Վար-
դապետ Նալպանտեան, որ բունի մը շաբա-
թէ ի վեր Վառնայէ հոն փոխադրուած է
իր աստանդաշրջիկ կեանքի շրջանը լրացնե-
լու համար, սկսած է հոս ու հոն անուա-
նարկութիւններ ընել թերթիս ուղղութեան
և նոյն իսկ խմբագրութեան դէմ : Ասիկա
Հոփաղանցիկը դարձացնէ մեզ սպասող պատ-
ճառով որ, մենք մինչև հիմա որ եւ է ուղ-
ղակի հաշիւ չենք ունեցած նշանի : Արդու-
թեան հետ, միայն մէկ քանի անգամքն, ըստ
մեր պարտականութեան, քննադատած ենք իր
մէկ քանի արարքները, որոնք ուղիւ չէին
համեմատեր ոչ աշխարհականի եւ ոչ ալ
կուսակցոն կղերականի մը ճշմարտակցեանց :
Թուենք մի քանիք :

Զայր Սուրբ Կիրակի օր մը երբ Սըր-
թութեան Եղեղանն առջեւ կը պատարագէր,
բարոյի տոհմ անանկ ստակալի անարկու-
թիւններու անարգանքներ տեղալ, անուա-
Ս. Ամիրխանեանցի դէմ, որ, ոչ միայն նու-
իրական բեմի վրայ, պատարագիլ բահանայի

մը չէր վայել, այլ նոյն իսկ եկեղեցիի շրջափակէն դուրս, սովորական անհատի մըն ալ չպիտի վայլեցնէինք անկասկած: Ո՞վ կրնայ թոյլատրել որ վարդապետ մը, ու մէկ ձեռքը ունի քրիստոսի խաչը ու միւսին մէջ Աւետարանը, ելլէ անպատկառ կերպով պռուս բեմին վրայէն թէ «Այդ մարդը շուն է, գազան է, վատ է, տաճիկ է, ահմետ է» միթէ կարելի չէ՞ր աւելի պատշաճաւոր բառերով ժողովրդին հասկցնել, ինչ որ կ'ուզէր ըսել յիշեալ անձնաւորութեան վերաբերմամբ. ու յետոյ, երբ քանի մը օր ետքը կ'ելլէ թաղականի մը ընկերակցութեամբ այդ անարգած մարդուն կը դիմէ, նորաչէն վարժարանին համար նպաստ խնդրելու և մեկնած ատենը դրանը առջև խոնուած ժողովրդին ընելու. «Միրելի ժողովուրդ, այս բարի անձնաւորութիւնը ձեզի համար տուներ պիտի վարձէ, ու խնամէ, որ իրաւունք չե՞նք ունենար քննադատելու զինքը և ըսելու որ ինք ի՞նչպէս այդ անձին քով կերթայ ու կը շողմէ կը շողոքորթէ զայն յանուն մարդասիրութեան մասնակցելու դպրոցական նպաստի մը: Իր տուած քարոզին նայելով, այդ մարդը եթէ մինչև իսկ իր բըսակէն վարժարան մը շիներ ու մեզի տտր, ընդունելու չէինք, այնպէս չէ՞:

Ու Պ. Ամիրխանեանց յիշեցնելով իրեն տուած այն քարոզը, կըսէ. «Ես անյիշատի եմ, կը ներեմ քեզի»: Քիչ ստորնութիւն չէ այս որո՞ւ որ կուղղուի:

Երկրորդ, վեց եօթը ամիս առաջ տեղս կը հասնի պարկեշտ և ուսեալ քահանայ մը, Տ. Գարեգին Արծրունի. այս տէրտէրը կը օկսի քահանայագործել ամբողջ ամիսներ ու բաւական համակրութիւն կը շահի, յետոյ վրայ կը հասնի մեր Հայր Սուրբը, ու Տ. Գարեգին հօր վիճակը փոքրի ցաւ կը պատճառէ թէ՛ իրեն և թէ՛ մէկ քանի քահանայ եղբայրներու. կը խորհին, կը մտածեն ու վերջապէս ճարը կը գտնեն այդ քահանան եկեղեցիէն դուրս հանելու. թաղականներու միջնորդութեամբ կը հարցուի իրեն թէ վրայակոս ունի՞ թէ ոչ. տեսէք. ընթերցողներ,

չորս ամիս քահանայագործութենէ ետքը կըլլար իրեն այս հարցումը. կը պատասխանուի իրենց թէ ունի և թէ պատրաստ է ցոյց տալ զայն Աւագերէց հօր կամ Հայր Սուրբին. բայց ձեւակերպութիւնը այս տեղ չի վերջանար, կ'առաջարկեն իրեն, — տարօրինակ բան, — այդ վկայականը ընդօրինակել ու յղել Պատրիարքարան, որպէս զի հաստատուի անոր օժեւալ քահանայ ըլլալը: Մարգը կը զարմանայ այս առաջարկութեան վրայ, ու, բնականաբար չի հաւանիր այդ բանին, հասկնալով իսկոյն որ խարդաւաններ մը զոհ կ'երթայ բացէ ի բաց:

Վարդապետ և քահանայք լուծած էին վերջապէս խնդիրը. կը յաջողին զայն եկեղեցիէն դուրս հանել տալ, նոյն իսկ արգիլելով անոր պահարանին մէջ կենալ: ԳԺԼԽՍՔ քահանան կը համակերպի իր բախտին, ու Շումլայի Թաղ Խորհրդոյ հրաւիրմամբ կը հաստատուի հոն, և յետոյ, Պատրիարքարան եղած հարցման մը վրայ, (առանց ձեռքի վկայականը զրկելու) կը պատասխանուի թէ «Տէր Գարեգին Արծրունի ճշմարիտ քահանայ է ու կրնայ պաշտօնավարել ամեն ուր որ երթայ»:

Արդ, կը հարցնենք Հայր Սուրբին թէ, ինք ի՞նչ վկայականով օժտուած, եկաւ Պուլկարիա ու այսպէս քաղքէ քաղք, գիւղէ գիւղ կը պտտի, առանց պաշտօն մը ունենալու կեդրոնական իշխանութիւնէ մը. թէ ինչո՞ւ երբ գրաւոր կերպով կ'երթ. Վարչութեան դիմեց Պուլկարիոյ մէջ մնայուն պաշտօն մը առնելու, կրօն. ժողովը մինչև իսկ իր այն գրութիւնը նկատողութեան չառնուլ որոշեց:

Վկայականի պղտիկ խնդրի մը համար Աստուծոյ մէկ պաշտօնեան եկեղեցիէն դուրս հանելու թելադիր կրօնականէ մը ի՞նչ օգուտ ու ծառայութիւն կրնայ յուսալ ազգը: Թող ընթերցողը դատէ:

Ահա ասոնք եղած են միայն մեր մեղքերը, որոնք, թէև եօթը մահացու մեղքերէն դուրս, զմեզ ամպարիշտներուն կարգը դասելու բաւական համարուած են սակայն Հայր Սուրբին կողմէ: Թող շարունակէ

իր անուանարկութիւնները, որչափ կ'ուզէ :
Մենք կ'որգահատինք իր վրայ : Որկին եր-
բէք չի կոչանցներ իր յարգը :



Յաւօք սրտի իմացանք քաղաքիս առաջ-
նակարգ հայ վաճառականներէն Տեար Մա-
ղաք Տ. Մինասեանի ըրած դառնաղէտ կո-
րուստը, յանձին իւր կողակցին

ՏԻՎԻՆ ԱՐՈՒՍԵԱԿ Մ. ՄԻՆԱՍԵԱՆԻ

որ յետ երկարատե տաժանելի հիւանդու-
թեան կնքեց իւր մահկանացուն ի հասակի
42 ամաց :

Յուզարկաւորութեան տխուր հանդէսը
վայելուչ շուքով կատարուեցաւ երէկ ժամը
3ին, և մարմինը ամփոփուեցաւ իր ազգա-
տոհմին յատուկ դամբարանը :

Երկնից մխիթարութիւնը կը հայցենք
Տեար Մաղաք Տ. Մինասեանի և իւր սգազ-
գեաց պարագայիցը :

Նամակ առ Խմբագրութիւն

Սիլիսդրէ 22 Հոկ.

Անցեալ տարւոյ գաղթականութեան
աղիտաբեր հոսանքէն Սիլիսդրէ ևս իւր բա-
ժինը ունեցաւ, հոս ալ եկան մաս մը գաղ-
թականներ, որոնք հազիւ կրնային իրենց օ-
րական ապրուստը հոգալ, այն ալ եթէ գործ
մը գտնէին :

Եւ այդ գաղթականաց մեծ մասը ան-
շուշտ կորստեան պիտի դատապարտուէր

եթէ Սիլիսդրէի տեղացի ազգայնոց կանխա-
հաս խնամքը ու ձեռնտուութիւնը չի հաս-
ներ զանոնք ձմրան և անթոթութեան ճիրան-
ներէն փրկելու :

Պէտք է յիշել նաև Արժ. Տ. Յովակիմ
բահանայ Յովակիմեանի հայրական վարժուն-
քը, որ այն առթիւ գիտցաւ իւր պարտքը
լիովի կատարել :

Ար յուսանք թէ այս ձմեռ ևս Սիլիս-
դրէի ազգայինք չպիտի վարանին հարկ ե-
ղած օգնութիւնները ըզել այն ամեն անոնց
որոնք պէտք պիտի ունենան յառաջիկայ
անոգոր ձմրան դառնութիւններէն զերծ մնա-
լու համար իրենց դիմելու, եւ մանաւանդ
այս տարի, որ սոսկալի ձմեռ մը կըսպառնայ
հայ անպատսպար գաղթականին :

Թ. Տ. Պ.

Պուրկազէն եկած նամակէ մը կը բա-
ղենք հետեւեալը .

Տեղւոյս ազգային գործերը նախաձեռնի
վիճակ մը ունենալէ շատ հեռի են : Վար-
ժարանին հոգաբարձութիւնը թէեւ կ'ուզէ
բան մը ընել՝ բայց բան մը ըրած չունի և
առ 'ի չգոյէ ամենողորմած դրամի բան մ'ալ
ընելիք չունի ։

Տէրը ինք ողորմի Պուրկազին :

Գարակէօզեանք, ըստ իրենց բարի սո-
վորութեան մեռած եղբայրներնուն կողմէ ազ-
գին եղած կտակները չեն ուզեր կոր գոր-
ծադրել արդէն անցելոյն մէջ այս ճշմար-
տութեան համոզուած էինք, նորէն բերան
ծռելու ի՞նչ տեղը կար . չէ՞ մի որ Փորձեալն
կրկին փորձելն յիմարութիւն է :

ԲՈԹ — Հէմ, Գարակէօզ կամ հաճի
էյվլաթ մուխավայէ մարդոց խօսքերուն կա-
րեւորութիւն կը տրուի :

ԽԱՐՈՒԱԾ ԱԿՆՑԻՆ

(ԻՐԱԿԱՆ ԴԵՊՔ Ի Կ. ՊՈԼԻՍ)

ԳԼՈՒԽ Դ.

ԳԱՐԵՋՐԱՑՈՒՆԸ

Ասիտւր աղայն՝ Մաթոս աղային այս այցելութենէն չախորժեցաւ, որովհետեւ, անոր ներկայութիւնը՝ գրաւորէն տակաւին տեղեկանալիք մէկ քանի բաներուն արգելք եղաւ. ուստի տրամութեամբ՝ քիչն տակէն « Բարի եկիր աղա » ըսաւ :

— Բարին արեւդ էֆէնտըմ, — պատասխանեց Մաթոս աղայն. ու անոր վրայ տեսած տիրութիւնը կնոջը մահուան պատճառին վերադրելով՝ յարեց. — Էֆէնտըմ, քաղքէն ան էսէֆէնկիւզ գիրը առնելէ մինչեւ աս օրս, սօն տէրէճէ մուսաճականով պէյնըդ ու Փօքիդ կու յոգնեցնիս. անձախ, գիննալու ես ուր՝ Աստուածպետականութեան տուած խարարին դէմ չինք կրնար էօզիւր մի պէյան անել. « Եղիցի կամք բո » ըսաւ. պինաէն ալէյ, հաստըս չըլլալով կըսիմ ուր՝ ատ տէրէճէ տիւշինճէներդ քնցուր անելու ես. տիւարի դուրպէթը վիճուածէ պէօհիւզուրութեան մի թէսատիւֆ անես իսէ՝ ի՞նչ տի անինք :

— Աղէկ կըսիս ըմմա՝ աս իմ քէտէրս բէք չաբուխ մուցուելիք բէտէր չէ. եղջի օրը լուսափօքիին պէս սէվլի պոյլի ախշին մի տեսայ իսէ՝ սիրտս նորէն ելաւ :

— Շիտտակ է, անձախ ի՞նչ կրնանք ընել. անոնց շեռ մե՞նք ալ տի մեռնինք. յուսով եիմ ուր՝ բիշ վախիթէն կու մոռնաս. վէ հըմայեկս կուզիմ ուր ծառայականիս հետ քչիյ մի տէֆիկամ ըլլալու հըմար Ղալաթա ետխասին անցնինք :

— Ֆէօն ի՞նչ տի անինք :

— Էֆէնտըմ, բիրախանա կըսին տեղ մի կայ. ֆէօն տի երթանք. աս թէքլիֆս բէտտ չի տի անիս : Անցած տարի քաղքէն

նոր էկած ատենս՝ Անժօտեհց Զաքար էմմին ծառայականս ֆէօն տալու իբրամ արաւ, էրէյիճէ էյլէնճէլի տեղ մի է. պախուսուս մեր էրկրին մէջ չի տեսած բաներդ ֆէօն տի տեսնաս : Վէ մատէմ՝ քի ըսի՞նք սոյլ էկեր եինք, ըմմէն ծայն ու պուճախը սորվելու եինք ուր քաղաք գնալնուս՝ հիքեայէ անինք : Աս իբրամս իսպուլ տի անիս, աղա :

Աստիւր աղայն մտածելով որ ծայրը իր քսակին չպիտի դպի, համակերպեցաւ այս առաջարկին և երկուքն ալ կամուրջէն անցնելով՝ Ղալաթայի վայրատաի դիմացի դարեջրատուններէն մէկը գային :

Այս այն կարգի դարեջրատուններէն էր, ուր ծառայելու պատճառը յանձնուած է կիներու, որոնք յամախորդին քսակը շորթելու մասին վարպետ քսակահատները կը գերազանցեն :

Երբ Աստիւր և Մաթոս աղայք դռնէն ներս մտան, երեք սպասուհիք խայտալով ու կաքաւելով՝ զանոնք դիմաւորեցին :

— Աս պըյուխուզները ֆէօն ի՞նչ կանին, հարցուց Աստիւր աղայն :

— Էֆէնտըմ, ասոնց անիւնը քառսուն թապիր կուլլի. սա ո՞ւր է, մէյլանաներուն մէջ մինչօներ չի կա՞ն մի ետ, իշթէ աս տեղացի մինչօներն ալ ասոնք եին :

— Թօֆաֆ բան :

Այս միջոցին սպասուհի մը ասոնց մօտենալով հարցուց.

— Նէ՞ պուլուրածափսինիզ տկալար :

— Մէտէթ ի՞նչ կուզի Աստիւր աղա :

— Խէյֆէ մի թող էփէ :

— Խէյֆէն ի՞նչ տըլլի, պայփախան բիրան կայ իսէ :

— Ադ բիրա ըսածիդ մէյնութիւնը :

— Արբա սույի,

— Թօֆաֆ բան, արբա սույին կու խուժվի՞ մի ետ :

— Ասի քու գինցածդ չէ. ծառայականս պինտ էռաջ չուղեցի խմել ըմմա՝ սըղրա հազ ըրի : Հանուժ ախշին, սիպէ իքի բիրա կէթիւր :

Սպասուհին — Տիօ պիրէ՛ղ .

Անդիէն ձայն մը — Էֆթաքսէ տիօ պիրէ՛ղ :

Մաթոս աղայն գաւաթը ձեռք առնելով . — Հիւրիւմէ Աստիւր աղա, չաբուխ չի խումես իսէ՛ ուռուֆը կու փախչի, հըմէն Աստվածպետականութիւնը սապր ու թահամիւլ տայ :

Այս ըսելէ ետքը ի մի ումպ իր գաւաթը պարպեց . իսկ Աստիւր աղայն թէն առջի բերան չի համարձակեցաւ խմելու, բայց տեսնելով որ փրփուրին հատնելովը գաւաթը ալ քիչնալու վրայ է, «ասոր մենք փարայ տի տանքը ըսելով՝ գաւաթը ի մի ումպ պարպեց, ու բիթն ու բերանը այլակերպիւմ գոչեց .

— Էօֆ, բէյ մի ղէգէ չի կա՞յ աղա, քիթն մուգմուգաց, կաթնավերները օլտուխ՝ ճաքէսքին եին շիներ :

— Պադսանա՛, պիր աղ մէղէ եօֆ մի :

— Զօգ . Ասբասիա՛, ֆէռէ էնա բօսսիօն կուպիէա :

— Մէսսօֆիս :

— Աղա, առ ֆէսօֆէօսէ լսելն ի՞նչ տըլլի :

— Պէսպէլլի ախշինը էմր կանէ նը՝ մինչօն ալ պաշ իւթիւնէ կըսէ :



Կուպիէոի պանիրն ու հացը բերուելէն ետքը սպասուհի մը եկաւ Մաթոս աղային բովը նստեցաւ ու գարեջուրին գաւաթները լեցնել տալով, զանոնք իր ձեռքովը աղոնց հրամցուց :

— Սէֆա կէլտինիղ :

— Սէֆա պուլտուգ էֆէնտըմ :

Մաթոս աղայն — Կու հայիս մի էֆէնտըմ, կու հայիս մի, ասոնք օլտուխճա թէրպիլէլի բաներ եին, մուշթէրին իգրամ կանին, պիլագիս՝ Թափուխ բաղարի Արօստօսին մէյխանան ջիւր մի պիլէ իգրամ չին անիր :

— Շիտտակ է :

— Մուխապէլէ անի՞նք մի :

— Ինտո՞ր տի անինք :

— Բան մին ալ իրեն կու խմցունինք, Զաքար էմմին ալ էնանկ արաւ :

— Բարով կուլլի :

— Հանում ախշին, սէն նէ՞ պուլու-

րուրսն :

— Համբանեա . Ռօղա՛, ֆէռէ էմէնա տիօ պուգալի շամբանեա :

Սպասուհի մը անմիջապէս երկու շիշ Համբանեա բերաւ :

— Մաթոս պէկ, ադ շոմսնեօն ի՞նչ տըլլի :

— Եֆէնտըմ, մալիւմ ա՛, կնիյ մարգիկ իչրէթ չին անիր, մինպահաթ շիրուպ մի է բերել տուածը :

— Էյ էրկու շուշէն ի՞նչ տըլլի :

— Պէյիս չիկայ աղա, շատ շատ էրկերկուքէն չորանոց մի տի տանք, ան ալ բառսուն տարին հեղ մի . Աստիւր աղայիս հըմար ֆէտա՛ թող ըլնի :

(Շար.)

ՄԱՆՐ—ՄՈՒՆՐ

Թերթի մը Հազարամեակը

Բէքինի մէջ հրատարակող Զինական Բէնի—Բան (ինչո՞ւ համարը) անուն լրագրոյն Հազարամեակը պիտի տօնուի մօտերս :

Չորս դարու չափ այդ թերթը ամսական է եղեր, 1361ին շաբաթաթերթ, 1800ին հանապազօրեայ : Այսօր երեցս հանապազօր-

եայ է : Առտուն կը հրատարակուի գեղին
Թղթի վրայ , կէս օրին՝ ճերմակ , երեկոյն՝
մոխրագոյն :

ԽԱՐԵՍԽՈՒԲԵՍԱԿԱՆ

Հոկ . 21 Թուականաւ քաղաքէս խրմ-
բագրութեանս զրկուած նամակէ մը կը տե-
ղեկանանք թէ , 'ի ծննդենէ մինչեւ ցայսօր
գատակաշրջիկ երեք պարոններ անցեալ օր
Պարսիկին սրճարանին մէջ ժողով գումարն-
լով , կ'որոշեն ասկէ առաջ ըրածնուն պէս
Թաշկինակ պտտցունել յանուն աղքատաց , եւ
անմիջապէս գործի կը սկսին :


Այս որոշումը տուած ատեննին իրենց-
մէ քիչ մը հեռու կը նստի եղեր Պ . Նամա-
կագիրը , զոր կ'երեւի թէ Պուլկար կամ Յոյն
կարծելով , չեն քաշուեր անկէ լսուելու
աստիճան բարձրաձայն խօսելէ :

Պարոն Նամակագիրը հեռուէն անոնց կը
հետեւի , որոնք բոլոր հայ սրճարանները պը-
տտելէ ետքը մինչեւ իսկ վաճառականներու
խանութները կը մտնեն ու նոյն գիշերը
Քաւէ — Շանքաւն հմթալով կը սկսին զուար-
ճանալ ... Թաշկինակին պարունակութեան
շնորհիւ :

Պ . Նամակագիրը ա'լ չի կրնալով համ-
բերել , կը սկսի յանուն աղքատաց ըրած
այս գողութիւննին երեսնուն տալով յան-
դիմանել զիրենք , որոնցմէ մին , « Պատուոյս կը
գպչիս կուր , կեցիր ես հիմա բեղի կը սորվե-
ցնեմ » , ու ըսելով կ'առնէ կը բալէ . իրեն պէս
դիմակնին վար տոնուած ընկերներն ալ սանկ
պիտի ընենք նանկ պիտի ընենք ըսելով ա-
նոր կը հետեւին :

Մինչեւ այսօր մեր Պ . Նամակագիրը կը
սպասէ որ այդ պարոնները ընկերներն ընեն :

Ի՞նչ ընել պէտք է ասանկ իսաբեսխու-
բէսներուն . — 2ի վճարել ու երես դարձնել :



ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Արագած ճաշարանի յաճախորդներէն
մին , որ միանգամայն մեր Թերթին բաժա-
նորդներէն է , այս օրերս նշանակելի նորու-
թիւն մը տեսած է յիշեալ ճաշարանին մէջ .
Ամին օր հայերէն ճաշացուցակին գլուխը ու-
տանաւորներ կը գրուին օրուան կերակուր-
ներուն ներբողեանը ընելով . յաճախորդնե-
րը համեղ ու աժան կերակուրներէ զատ ,
շատ հաճոյալի ժամեր կանցունեն եղեր նոյն
ճաշարանին մէջ :

Բոժոժիկ հետեւեալ նմոյշները կը հա-
ղորդէ մեզ .

Թէեւ անունով կերակրւածաւ ,
Բայց Արագած ինքն է գիտնոց կա-
ճառ .

Ուր բարեկամներ լինին ժամագիր ,
Լուծելու օրուան է՛ն կնճռոտ խնդիր .
Հոն միտք ու մարմին լինին միշտ առողջ ,
Ու ժամեր սահին հաճոյքով ամբողջ .
Կ'ուզէ՞ք ունենալ ողջ միտք , ողջ մարմին ,
Ու յարգը փոխալ միշտ ձեր դրամին ,
Փութացէք առտու իր'կուն յԱրագած ,
Ուր պիտ'հաճոյքով ճաշէք անկասկած :

Այս յառաջաբանէն ետքն է հետեւե-
ալը .

Ահա ձեզի ճաշացուցակ մը երկար ,
ճաշակեցէք , առողջ լինիք թէ տկար :

Նախ ձեզի տամ մէկ պատուական ար-
գանակ ,
Որ կը շահի միշտ լաւագոյն մրձանակ .

կամ, թէ կ'ուզէք, քաղըթապուր մը
Հիւթեղ,

Քնհատ մարդուն էն կազդուրիչ ու-
ժով դեղ.

Ապա ձեզ տամ խաշու, ոլոք կամ
կողիկ,

Խորված մսեր կամ բանջարներ կակողիկ.
Իսկ թէ ձեզ շատ կը նեղէ բուռն մէկ

անձուկ,
Չեղի բերեմ աղւոր պատառ մ'դիւան

ձուկ.
Ունիմ դգմած, կճղակ հաւկիթ ո

եղինձ.
Որուն ապրանքն է տասնը չորս լոկ եղ,

ինձ.
Ունիմ նաեւ կերակուրներ թարմ ձէթով,

Անուշ մածղին անխառն առատ զուտ
կաթով.

Կ'ուզէք ընել ճաշ մը համեղ ու աժան
«Արագած» էն պէտք է ըլլաք անբաժան

Հայելի

Գրպաննիդ լեցուն, ճոխ լաթեր հագած,
Անփոյթ բայլերով դիմէք յ'Արագած.
Եւ ուրախ սրտով բազմիք ի սեղան,
Ճոխ համադամներ ձեր առջեւ տեղան.
Բայց մինչ հաճոյքէ ձեր աչք, թուշ վառին,
Կը խորհիք արգետք բիշ մ'ալ թշուառին:

Հաճոյք մ'է, իրա՛ւ, կերակուրն համեղ,
Հաճոյք մը նոյնպէս՝ զբօսանքն անմեղ,
Քայց ձմեռն հասաւ, փչեց սաստիկ փուր,
Յուրտէն կը սառնին ձեռքերն փափուկ,
Ու մինչ հաճոյքով կոնծէք դուք օլին,
Գիտէ՛ք թէ աչքատն չունի անկողին:

ԱՍԼԸ ԵՕԴ

Մատմազէլ ֆրայզեր պու սէնէ թէք-
քար վարնայտ կէլէճէք տէյօրլար. — Ասլը
Եօ՛գ:

Պաղլարը տա՛ վէքիլ կէօնտէրէճէք ի-

միշ տէյօրլար. — Ասլը Եօ՛գ:

Պէլէտիյէ՛ դաղթականլարա օտուն բու-
սուլասը տաղըտաճագ ըմըշ. — Ասլը Եօ՛գ:
Լօնտրատան պէշ օն պին լիրա կէլմիշ
իմիշ. — Ասլը Եօ՛գ:

Մսըրտան պուրա գաղթականլարը իշիւն
3—400 գազէվի բիրինճ Եօլա չըգմըշ տէ-
Եօրլար. — Ասլը Եօ՛գ:

Օրմանեան մահպուսլարը գուրթարա-
ճագմըշ. — Ասլը Եօ՛գ:

Վարնատան սըլմա իլլէթի միւնտէֆի
օլմուշ տէյօրլար. — Ասլը Եօ՛գ:

Կաղէթա պէտէլինի պիր գաշ կիւնտէն
կէօնտէրիրիզ տէյօրլար. — Ասլը Եօ՛գ:
(Տէվամի)

ՀԱՆԵԼՈՒԿ

Թիւ 26

Ծնած ատեն կանանչ է,
Մեռնելու մօտ կարմրի.
Մահունէն վերջ ճերմկի.
Գիտցէք նայիմ աս ի՞նչ է:

— օ —

Թիւ 25 հանելուկն էր ՇՈՒՔ:

Վ. Քիւչիւք:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆ

ԵՐԳԱՐԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷՁԻ

ԿԱՄ

ԴԱՍԱԳԻՐՔ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՍ

ՓԱՔՐԻՆ ՏՂԱՅՈՅ

Այս երգարանը, իր տեսակին մէջ առա-
ջինն է որ լոյս կը տեսնէ հայերէն լեզուով.
Կը պարունակէ մանկական զուարճալի երգեր
ու քանի մը ոտանաւոր առակներ եւ կրնայ
երախայներուն ծառայել նաեւ իբր ընթեր-
ցանութեան գիրք որուն պարունակութիւնը
զբօսեցուցիչ եւ հրահանգիչ է միանգամայն
անոնց համար:

Թուղթը ընտիր է, տպագրութիւնը՝ մա-
քուր եւ կազմը վայելուչ:

Գին 80 ՍԱՆԹԻՄ

Կեդրոն. Վառնա, Արեւելեան տպարան,
2րդ. թաղ, Թիւ 1104.


ՄԵՔԵՆԱՅԻՑ ԳՈՐԾԱՐԱՆ

Եւ Յուշարան
(ՊՈՌԱԿԱՐԻԱ)

Դ. Յ. ԲԱՐՔԱՄԵԱՆ Լ Բ. Է. ԲԱՆՉՈՒՅ

Վառնա ծրգ թաղ ելտող Թապիա

Ամէն տէսակ մեքենաներու շինութիւն և նորոգութիւն, ջաղացքի թէ՛ շոգիով և թէ՛ պարզ ջուրով գործող մեքենաներ, նաեւ շոգեմակոյկներ, ջաղացքի վերաբերեալ ամէն տեսակ երկաթայ գործիքներ, գլամակաւն գասաներ, շէնքերու յատուկ երկաթեղէններ, տեսակ տեսակ ջրհաններ և այլն և այլն կը պատրաստուին: Պատ. Յաճախորդք միշտ գոհ մնացած են սոյն գործարանի շինութիւններէն:



ԳՈՒՀԱԿ
Ո. ՊԱԳԱՅԻ

Կամ Զուարճալի Բաղդացոյց
Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզբօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով գիմել մեր խմբագրութեան:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԼ

ՆՈՐ ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

ԿԱՄ

ՀԱՒԱՔԱՆՈՅ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱԶԳ. ԵՐԳԵՐՈՒ

ՄԱՍՆ Ա.

ԴԻՆ 2 ՖՐԱՆԿ

Սոյն երդարանը որուն տնօրէններ կ'ըսպասուէր ժամանակէ մ'ի վեր, 216 էջերով, մեծ խնամքով սրբադրուած, բացի հին ընտիր երգերէ կը պարունակէ նաեւ բազմաթիւ նոր երգեր:

Դիմելու Մ. ԽԱԶԻԿԵԱՆ ՎԱՌՆԱ.

2րդ. թաղ. Արեւիկեան Տպարան, 1140.

Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԳԻՍԻ

Սոյն տաճար, հաւցէտամբ, նախակազմուի, հրաւիրատուն, բարենիշ, տոմոսի, և այլն և այլն թէ՛ պարզ և թէ՛ սակ'եղօժեալ մէկ քանի գոյններով կը աւպագրուին: Գաղաքներէ եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Գին գոհացուցիչ: Գիմել հայելիի խըմբագրութեան:

Վալրիկեմակաւն Տպարարիւն

Ա Յ Յ Ե Տ Ո Մ Ս Ի

100 հաւաք 2 ֆր. կը ապագրուի: Սոր տուին մէջ կը գտնուի Այցեւորման գործածութեան հրահանգը պարզեցող տեսարակ մը, որուն կողքին վրայ այցեւորման տիրոջ նունը տպագրուած պիտի լինայ: Գիմել խմբագրութեան: Գաղաքներէ ըլլալիք յանձնարարութեան թղթատարի ծախք 30 տանգիմի: յանձնարարողին վրայ է: Դրամի փոխարէն Պուլկարական 5, 10 և 15 տանգիմից նամակագրուած կ'ընդունուի: Կանխիկ:



Կ Ա Լ Վ Ա Ն Ի Ս Թ

Ամեն տեսակ
տպագրական կա-

ղապարներ պատրաստող, նաեւ անձնական և թէ՛ առեւտրական կնիքներ: Սոյն կնիքները որ ըստ վերջին գրութեան պղինձէ կը շինուին, հրապարակի վրայ երեցած քառուկէ կնիքներէ աւելի դիմացկուն են և դիւրութեամբ կը տպագրուին. գինն ալ քառուկէ գինէն տարբերութիւն չունի: Գաղաքներէ ըլլալիք յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Գիմել ի վառնա 216 էջերէր փողոց թիւ 561: Գին գոհացուցիչ:



Отговоренъ редакторъ: Н. Драгулевъ
Печатница «Взаимность» — Варна.